## *1916*

ԼԻ-ԹԱՅ-ՊՈ

### *ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԸ*

*Տըխուր նըստած լուսամուտի առաջին*
*Կարում էի մետաքս բարձին խոնարհած։*
*Ծակեց ասեղն — արյուն ծորեց իմ մատից,*
*Սիպտակ, սիպտակ վարդի վրա ասղարուր։*
*Խոշոր, խոշոր սիպտակ վարդը կարմըրեց։*

*Քեզ վրա էր միտքս դառնում հենց անվերջ...*
*Դու հեռու ես, հեռո՛ւ, հեռո՛ւ կըռվի մեջ...*
*Այժմ էնտեղ քո արյունն էլ չի ծորում...*
*Ու լճացան արցունքները իմ կարոտած*
*աչքերում...*

*[Երկար, երկար լալիս էի ու կարում։]*
*Տըրոփ, տըրոփ...*
*Ձիու ոտքի տըրոփյուն չէ՞ր արդյոք էս...*
*Թըռա տեղից... նա է... եկավ վերջապես...*
*Բայց, ա՛խ, էն լոկ խեղճ իմ սիրտն էր տըրոփում։*
*Նորից նստած լուսամուտի առաջին,*
*Թափվում էին արցունքներըս [էն բարձին]*
*Ու ջինջ, որպես մարգարիտներ ցոլցըլուն*
*Կարմիր կարմիր վարդի շուրջը ցոլցըլում։*